ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 4. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

16) **լիազոր մարմին՝** սույն օրենքին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած ~~բնապահպանական~~ շրջակա միջավայրի ոլորտի պետական կառավարման մարմին.

Հոդված 21. Փորձաքննական եզրակացությունն ուժը կորցրած ճանաչելը

1. Շրջակա միջավայրի վիճակի և (կամ) ~~բնապահպանության բնագավառը~~ շրջակա միջավայրի ոլորտը-կանոնակարգող օրենքներով ու իրավական այլ ակտերով սահմանված պահանջների փոփոխման դեպքում լիազոր մարմինը ձեռնարկողին ծանուցում է բնապահպանական նոր պայմանների և դրանց իրականացման ժամկետների վերաբերյալ: Ծանուցումը ստանալուց հետո ձեռնարկողի՝ սահմանված ժամկետում այդ պայմանները չկատարելու դեպքում լիազոր մարմինը ուժը կորցրած է ճանաչում իր տված փորձաքննական եզրակացությունը:

2. Փորձաքննական դրական եզրակացությունն ուժը կորցրած է ճանաչվում, եթե՝

1) գործունեությունն իրականացվում է փորձաքննության ենթարկված նախագծային փաստաթղթերի և փորձաքննական եզրակացության պահանջների շեղումներով.

2) փորձաքննության ենթարկված նախագծային և հիմնադրութային փաստաթղթերում կատարվել են շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող փոփոխություններ՝ առանց լիազոր մարմնին այդ մասին տեղեկացնելու.

3) սույն հոդվածի 1-ին մասով ներկայացված պայմանները չեն կատարվել սահմանված ժամկետներում.

4) ընդունվել է բնապահպանական նոր օրենսդրություն.

5) փորձաքննական եզրակացություն տալուց հետո ի հայտ են եկել էկոլոգիական նոր գործոններ:

3. Ձեռնարկողը սույն հոդվածի 1-ին մասով նշված ծանուցումն ստանալուն պես պարտավոր է իր գործունեությունը համապատասխանեցնել լիազոր մարմնի ներկայացրած պահանջներին, չկատարելու դեպքում լիազոր մարմնի կողմից գործունեությունը դադարեցվում է մինչև պահանջների կատարումը:

4. Ձեռնարկողը, փորձաքննական եզրակացությունը ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ լիազոր մարմնի ընդունած որոշումը կարող է բողոքարկել վարչական կամ դատական կարգով:

5. Փորձաքննական եզրակացությունն ուժը կորցրած ճանաչելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: